կաթողիկոսին որ ի սուրբ աթոռն Սըսոյ[1], *եւ ի քաղաքս յԵւդոկիայ, որ ասի Թոխաթ, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի զօրավարին, որ եւ Թախտիղալայ կոչի, ձեռամբ սուտանուն, տրուպ եւ հողիկ Մկրտումի մեղօք վիրաւորի եւ անարժանի Ծոչեցւոյ: Յիշատակ է Քմաքչի Թորոսի որդի Պետրոսին եւ ծնողացն հօրն Թորոսին եւ մօրն Հոռոմսիմէ եւ հօրեղբօրն Սարգսի, նաեւ պապին իւրոյ Դաւթին եւ հանիկին իւրոյ Մանուշակին եւ ամենայն արեան...: Դարձեալ՝ յիշեցէք ի Քրիստոս ստացող աւետարեր սուրբ տառիս Պետրոսն եւ կենակիցն իւր Թագուհին եւ որդիք նորին Ներսէսն, Սարգիսն եւ Դօվլաթն եւ դստերքն իւր Մարիամ, Հոռոմսիմին եւ նորաբողբոջ Վարդենին, նաեւ հանգուցեալ որդիքն՝ Դօվլաթն եւ Թորոսն, դստերքն՝ Ալթունն, Հոռոմսիմին, յիշեցէք եւ ողորմի Աստուած ասացէք: Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս Պետրոսն որ Պետեր ասի, որ ստացաւ զսուրբ աւետարանս եւ ետ յիշատակ ի սուրբ Աստուածածինն, որ ի քաղաքն Անթափ, ի ձեռն Բաղդասար աւագ քահանային ընդ իւրայնոյ միաբանիւն, զոր եւ Տէր Աստուած բարի վայելել տացէ...: Արդ եւ ես յետնեալ ամենեցունց, մեղօք լցեալ չարեօք, վարանեալ եւ դատապարտեալ, զանխաստ եւ զախմար, անպիտան եւ անարուեստ Մկրտում եւեթ ծրօղս տեսի այսչափ սէր եւ զփափագ, որ զաստուածոյնսն ունէր Պետրոս, հազիւ յանձն առի եւ յանդգնեալ մխեցի ի սա ձեռս ի ծրել, բայց ողորմութեամբն Տեառն յանկ ելեալ կատարեցի: Նաեւ աղաչեմ անմեղադիր լինել սխալանաց եւ խոշորութեան գրոյս, քանզի կարն իմ ոչ էր աւելի, քանզի ոչ կարացաք օրինակ մի գտանել ստոյգ եւ թէ կայր Բ. կամ Գ. յեկեղեցւոջ, հանապազ յառեան գոլով, ոչ կարէին տալ եւ գրեալ եղեւ այլ իմն յօրինակէ, բայց յետոյ բազում աշխատութեամբ եւ պինդ ջանիւ չորեք կողմամբք եւ չորք աւետարանաւ սրբագրեցաք ստոյգ յօրինակէ, զի որք հմուտ իցեն արհեստից չգտանեն ի սմա բան սխալանաց աւելի կամ պակաս եւ այլք որք ոչ գիտեն արհեստ ոչ է պարտ այնպիսեացն թէ մխէ ի սա ձեռն զաւելորդ բառնալ կամ զպակաս լնուլ, այլ այսքանս բաւական են գիտողաց, փոփոխեալ փոխերուն, զգոյշ լինել պարտ է, որ եղեւ ի հին օրինակէ: Այլ եւ ոչ ոք ունի իշխանութիւն մխել ի սա ձեռն եւ հանել ի սուրբ Աստուածածնէն՝ ծախելով կամ գրաւելով կամ զողանալով եւ թէ ոք յանդգնի եւ առնիցէ, ըստ արժանեացն կրեսցէ պատիժ: Եւ թէ ոք տարցէ խնամ սուրբ մատենիս եւ պահեսցէ զսա սրբիկ՝ ի հրէ ի ջրէ ի ձիթէ եւ ի նամէ, վարձս առնուցու, ամէն: Մանաւանդ յիշեցէք ի Քրիստոս զՄկրտիչ քաջ քարտուղար քահանայն յԵւդոկեցի, որ ծաղկեալ զարդարեաց զսուրբ աւետարեր աստուածատունկ դրախտս ոսկւով եւ լազուարդով որթով եւ այլ գոյն զգունին եւ երանգ երանգ դեղերօք եւ պայծառացոյց ննենի պարտէզ աստուածարնակ ծիծռամբ ոսկեվիետուրիւ, զոր Տէր Աստուած վարձս բարեաց պարգեւեսցէ եւ ինքն ընդ սուրբ քահանայսն դասեսցի եւ առնուցու ըստ արժանեացն փոխարէն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն: Հայր:*

[1] *Ուշագրաւ է հոս Ազարիա կաթողիկոսի յիշատակութիւնը գրչէ մը, որ Եւդոկիա կը գրէ. Սիսի աթոռին վրայ կը բազմէր 1674—1686 Սահակ Ա. Բիլեզցի կաթողիկոս. 1677էն սկսեալ մինչեւ 1681 իրեն աթոռակից (կամ հակաթոռ) կը յիշուի Ազարիա կարկառեցի: Այս տեղ միայն Ազարիա առանձին, առանց Սահակի յիշատակուած կը գտնենք (հմմտ. իր մասին Բաբկէն Ա. կաթողիկոս, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ. Անթիլիաս 1939, էջ 411—420):*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

2.

ԱՒԵՏԱՐԱՆ

ԹՈՒՂԹՔ՝ 289: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17 × 12: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, իւրաքանչիւրը՝ 10·5 × 4: — ՏՈՂՔ՝ 22: — ԹԵՐԹՔ՝ 24: — ՆԻՒԹ՝ Մագաղաթ, բնտիր, քիչ մը մութ գոյնով: — ԿԱԶՄ՝ տախտակ. կաշեպատ, զարդագծերով եւ գծերով խաչ մը առջեւը: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ՝ պահպանակ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած բայց առջեւէն եւ ետեւէն թղթեր հանուած, նաեւ Ղուկասի նկարն ու սկզբնաւորութիւնը: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ գոյնզգոյն, շատ յաջող, թռչնագիր: — ԳԻՐ՝ բոլորագիր, յստակ, գեղեցիկ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ գրեթէ ամէն էջի վրայ, սիրուն երփներանգ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ Աւետարաններու սկզբնաւորութիւնները գոյնզգոյն: — ԽՈՐԱՆՔ՝ թղ. 15ա, 96ա, 228 գոյնզգոյն շատ յաջող, ամենուրեք ոսկին առատօրէն գործածուած: — ՆԿԱՐՔ՝ թղ. 14բ. Մատթէոս. թղ. 95բ. Մարկոս. թղ. 148բէ վերջ Ղուկասի նկարը հանուած թղ. 227բ. Յովհաննէս (մօրուքով եւ առանց Պրոխորոնի) թղ. 2բ—9ա տախտակք. ամէնն ալ գոյնզգոյն, ոսկեզարդ, բաւական յաջող: — ԴԱՏԱՐԿՔ՝ թղ. 1ա—բ, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա. 9բ, 10ա: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ. դարէն առաջ (?): — ՏԵՂԻ՝ անծանօթ: — ՏԷՐ՝ անծանօթ: — ԳՐԻՉ՝ անծանօթ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ կորուած հանուած: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ տե՛ս վերը:

Մատեանս է Աւետարան՝

Թղ. 2բ—9բ. Աղիւսակք:

Թղ. 10բ—93ա. Մատթէոս (եւ նախադրութիւնք:

Թղ. 93ա—145բ. Մարկոս (եւ նախադրութիւնք):

Թղ. 146ա—225բ. Ղուկաս (եւ նախադրութիւնք):

Թղ. 225բ—283բ. Յովհաննէս (եւ նախադրութիւնք):

Թղ. 288բ. Իրք չնացեալ կնոջ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. գլխաւորը կորուած ու հեռացուած:

Թղ. 2բ (տարբեր գրով). «Վաճառեցաւ մագաղաթս սուրբ աւետարանս ի Բերիայ իր (°) Միքայէլ աւագ եկեղցոյ որդոյ (°) եւ որդւոյն յետոնէ (°):

ՂԼԵ ամի Տեառն ի Ս. Վ. Դանիէլ»:

ՋԼԷ (1488)*ին օգոստ. 10ին այս սուրբ Աւետարան Գրիգոր հօրխ յիշատակ է որ հանգուցեալ... Գիքոր աղայիս եւ որդւոյն եւ հանգուցեալ էլմասին որ... կին... սր... յիշատակ է ծառայ տեառն (կէտերու տեղերն անընթեռնելի, նաեւ չեղագիր՝ կարմրագիր ստորագրութիւնը (Տէր Գրիգոր Հովեան ?):*

ԲԷՅՐՈՒԹ. 1950: Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Աշխատասիրեց՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆ

ԳԼՈՒԽ Դ.

ՅՈՎԱԿԻՄ ՂԱԶԱՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ (1743—1826)

Յեղապետ Խօջա Ղազարի չորրորդ՝ կրտսեր որդին էր Յովակիմ Լազարեանը. Նա ծնուել է Ն. Ջուղայում 1743 թ. սեպտեմբեր 5ին:

Լազարեան մեծահամբաւ տոհմի առաջին եւ երկրորդ սերունդի բոլոր անդամների կեանքի ու գործունէութեան մասին տեղեկութիւնները, ցաւօք սրտի, չափազանց պակասաւոր են, մինչդեռ կարելի էր սպասել, որ նրանց երկու կենսագիրները՝ Մ. Մսերեանցն ու Պրոֆ. Ալ. Ջինովեւը, որոնք իրենց աշխատութիւնները գրել են 1856 եւ 1863 թթ. այսինքն՝ երբ դեռ կենդանի էին տոհմի երկու նշանաւոր ներկայացուցիչները՝ Յովհաննէս եւ Խաչատուր Յովակիմեան Լազարեանները, երբ ողջ էին նաեւ շատերը նրանց ժամանակակիցներից, երբ դեռ թարմ էին յիշողութիւնները, կը տային աւելի հարուստ եւ աւելի արժէքաւոր տեղեկութիւններ նրանց մասին, բայց իրականին մէջ այդպէս չէ. երկուսն էլ շատ համառօտ եւ նոյն իսկ շատ ժլատ են...:

Մեզ օգնութեան է գալիս կրկին Ալ. Երիցեանը իր մի շարք ուսումնասիրական պատմական մեծարժէք գործերով, որոնց մէջ ցրուած են արժէքաւոր տեղեկութիւններ Լազարեանների մասին:

Յովակիմ Ղազարեան Լազարեանցը ունեցել է թէ պետական եւ թէ ազգային հասարակական բեղուն գործունէութիւն, սակայն նրա մեծագոյն գործն եղել է ամենից առաջ ի կատար ածել իր մեծ եղբօր՝ կոմս Յովհաննէս Լազարեանցի կտակը՝ հիմնել Մոսկուայում հայ չքաւոր մանուկների համար Հայոց դպրոց, հանգուցեալի թողած 200·000 ռուբլի դրամագլխով:

Եւ արդարեւ, Յովակիմ Լազարեանի ամբողջ կեանքը կապուած է եղել այդ դպրոցի՝ Լազարեան Ճեմարանի հիմնադրութեան նախապատրաստական եւ կառուցման աշխատանքների, նրա կրթական գործի լաւագոյն կազմակերպութեան, նրա նիւթական ապահովութեան եւ իրաւական վիճակի բարեկարգման մեծամեծ ու տանջող հոգսերի հետ: Ճեմարանի առաջին տասնամեակի պատմութիւնը՝ պատմութիւնն է այդ Յովակիմի թափած ջանքերի, նրա բարոյական ու նիւթական զոհաբերութիւնների: Նա եղել է կառավարութիւնից հաստատուած Ճեմարանի առաջին հոգաբարձուն եւ de facto *նաեւ նրա առաջին վերատեսուչ (Դիրեկտորը):*

Նրա պետական ծառայութեան մասին գրեթէ ոչինչ չգիտենք. գիտենք, որ Մոսկուայի նահանգի ռուս ազնուականութիւնը ընդունել է նրան իր շարքերի մէջ 1792 թ. որ ստացել է 1812 թ. Հայրենական պատերազմի առթիւ կայսերական հրովարտակով սահմանուած Ոսկեպղնձեայ Ծքադրամ Վլադիմիրեան ժապաւէնով. որ 1816 թ. ստացել է Աստղեստական չքանչան Հրամանատար Կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ:

Այս Յովակիմը ունեցել է Տուլա քաղաքից 45 վերստ հեռաւորութեան վրայ կալուած՝ Պօկրովսկոյէ *գիւղը:*

Այս կալուածում Յովակիմ Լազարեանը 1787 թ. ընդունել է Եկատերինա Բ. կայսրուհուն իր մեծ շքախմբով, բաղկացած 21 երկսեռ հոգուց, երբ մեկնելիս է եղել այցելութեան տալու նորանուաճ Նոր Ռուսիայի՝ Խերսոն քաղաքին ու Ղրիմին: Այս Յովակիմը ընդունել է կայսրուհուն մեծ պատիւ-

© National Library of Armenia

ներով, սրտագին ու շքեղ հիւրասիրութեամբ: Կայսրուհին մնացել է երկու օր, հանգստացել եւ ապա շարունակել իր ճամբորդութիւնը: Եկատերինան եւ նրա շքախումբը մնացել են այնքան գոհ հիւրասիրութիւնից, որ կայսրուհին նուիրել է նրան՝

Յովակիմ Լազարեանց

«մատանի մեծագին եւ տուփ պնչադեղոյ ադամանդեայս», հաղորդում է Մ. Մսերեանցը:

Գէորգ Քանանեանը իր վերը յիշատակուած ճառի մէջ, ասուած ճեմարանի 50ամեակի առթիւ կայացած հանդէսին, տալիս է Յովակիմ Լազարեանի հետեւեալ բնութագիրը.

«Մեծահոգի կոտակարար կոմս Յովհաննէս Լազարեանը չէր կարող գտնել աւելի լաւ գործադրող իր բարի կամքի, քան էր նրա կրտսեր եղբայրը՝ Յովակիմ Լազարեանը: Սա ստեղծուած էր հասարակութեան օգտին ծառայող գործերի համար: Յովակիմ Լազարեանը պատկանում է այն փոքրաթիւ մարդկանց շարքին, որոնց համար կեանքը յարատեւ սխրագործութիւնների մի ամբողջ շարան է: Յովակիմ Լազարեանը անարատ բնաւորութեան տէր մարդ էր, վեհ հոգով ու լուսաւոր մտքով: Աշխարհի ունայն հրապոյրները ոչինչ արժէք ունէին նրա աչքում: Մնուցանելով իր մէջ քաղաքացիական զգացումներ, ունենալով խոշոր նիւթական կարողութիւն, նա վարում էր նահապետական պարզ կեանք. նա վզրուկ էր (вельможа — «վելմոժա» — «ջենտրմէն» Յ. Թ.) բառիս լաւագոյն իմաստով: Այն խոր յարգանքը, որ տածում էին դէպի նրա հայրենակիցները, մի բնական ու ակամայ տուրք էր, որ տրւում էր նրան նրա բարձր բարեմասնութիւնների համար, իսկ նրա բարոյական ազդեցութիւնը իր հայրենակիցների վրայ՝ անսահման էր: Ի հարկէ, նրա ձգտումների միակ նպատակն էր՝ հանրային շահը: Քրիստոնէական բարեգործութիւնը նրա հոգու պահանջ էր: Այդ իսկ պատճառով իր հանգուցեալ եղբօր միտքը՝ կառուցել դպրոց հայ երեխաների համար, կենդանի արձագանգ գտաւ նրա սրտում. զարմանալի չէ, եթէ այդ միտքը դարձաւ նրա սեփական դուրգուրալից միտքը: Նա նուիրուեց նրա իրագործման իր ողնիւ սրտի ամբողջ թափով. նա նուիրեց նրան իր բոլոր բարոյական կարողութիւնները, իր ամբողջ երկարատեւ կեանքը, իր հարստութեան մի խոշոր մասը: Այս առաքինի քաղաքացին իր մեծագումար նուիրատուութեամբ, իր անխոնջ աշխատանքներով ու խնամքով կառուցեց մեր այս դպրոցը, որը այսօր տպրում է իր 50ամեակը» (էջ 16—17):

Իսկ Պրոֆ. Ալ. Զինովեւը իր կողմից հետեւեալ կերպով է բնութագրում տպա Յովակիմին.

«Յովհաննէս Լազարեանը իր առողջամիտ նախատեսութեան մէջ եւ իր ընտանիքի անդամների ընդհանուր համաձայնութեամբ, նախապատուութիւն տուեց իր կրտսեր եղբօր՝ Յովակիմին, ընտրելով իրեն յաջորդ, եւ չսխալուեց այդ ընտրութեան մէջ:

«Յովակիմ Լազարեանի բոլոր ձեռնարկները եւ այն դիրքը, որ նա կարողացաւ ստեղծել իր համար, այդ անմոռանալի մարդը, ապացուցեցին, որ նա պատուով եւ արժանաւորութեամբ կատարեց եղբօր կտակը:

«Յովակիմ Լազարեանը պատկանում է այն մարդկանց շարքին, որոնք գիտեն լինել կենտրոնական դէմք եւ չենթարկուել բազմազան հանգամանքներին, որոնք անխուսափելի են հասարակական կեանքի ու գործունէութեան մէջ: Դիտակցելով իր բարոյական ոյժը, նա յարմարեցնում էր նրա հետ իր գործառնութիւնները, դրա համար էլ նրանք միշտ ճիշտ էին, հիմնաւոր էին ու բարեյաջող: Որպէս քրիստոնեայ եւ իր ընտանիքի բարի հայր, նա շատ ծառայութիւն-

ներ է մատուցել Եկեղեցուն եւ դաստիարակել իր երեխաներին աստուածավախութեան ոգով. որպէս բարի կալուածատէր եւ հարուստ դրամատէր՝ մխիթարւում էր իր գործերի ծաղկեալ վիճակով. որպէս առաքինի քաղաքացի, ամենքից յարգուած էր, եւ որպէս մարդկութեան բարեկամ, նա իր կենդանութեան ժամանակ եւ մահուանից յետոյ մեծ բարեգործութիւններ է արել ու շահել բարի յիշատակ եւ օրհնութիւն: Այդպիսի մի կեանք հարուստ չէ արկածներով, բայց նրա ամբողջ կեանքը նման է մի լուսապայծառ օրուան, որ իր արեւմուտից յետոյ էլ թողնում է լաւագոյն յիշողութիւններ[1]»:

**

Ինչպէս իր մեծ եղբայրները, պտ Յովակիմն էլ միշտ բերել է իր հեղինակաւոր ազդակցութիւնն ազգային գործերի կարգադրութեան մէջ. նրա տան դռները, ինչպէս նաեւ հետագայում իր որդիների տան դռները, միշտ բաց են եղել հիւրընկալելու թէ Հայոց կաթողիկոսներին եւ թէ հայ ազգային գործիչներին:

Այսպէս, օր., Ալ. Երիցեանը հաղորդում է.

«...Օգոստոս մէկին Եփրեմը հանդիսաւոր մուտք գործեց կայսերական մայրաքաղաքը եւ իջաւ Յովակիմ Լազարեանի պատրաստած ապարանքում: «Աստուած կեանք տածէ — գրում էր կաթողիկոսի ուղեկից Ռէթէոս եպիսկոպոսը էջմիածնայ — որ հոգաց գծախսս ամիսն 300 ռուբլի յինքենէ տալով... եւ միշտ տպա Յովակիմն փոյթ է շուտով հոգալ զգործ մեր ի դարձուցանել...[2]»:

Շնորհիւ Յովակիմ Լազարեանի ջանքերի նոյն օգոստոս 20ին կայսրը՝ Ալէքսանդր Ա.ը ընդունում է Եփրեմ կաթողիկոսին, որին ուղեկցել էին յիշեալ Ռէթէոս եպիսկոպոսը, երկու վարդապետներ եւ ինքը Յովակիմ Լազարեանը:

Ա. Երիցեանը հաղորդում է մի այլ ուշագրաւ դէպքի մասին.

«1817 թ., երբ Ներսէս արքեպիսկոպոսը (հետագայում կաթողիկոս) արդէն միտք էր յղացել Թիֆլիսում հիմնել մի դպրոց եւ մտահոգուած էր նիւթական միջոցներ հայթայթելու խնդրով, ուրախութեամբ իմանում է, որ դեռ 1801 թուին վախճանուած Յովհաննէս Լազարեանը, Լազարեան ճեմարանի հիմնադիրը, կտակել է, որ երբ Թիֆլիսում Հայոց ուսումնարան լինի, իր ժառանգներից ստանան 3000 ռուբլի»:

Ապա Երիցեանը հաղորդում է, որ 1818 թ. Յովակիմ Լազարեանը վճարել է այդ գումարը, աւելացնելով նրա տոկոսները՝ 2000 ռուբլի եւ իր կողմից էլ նուիրաբերելով նոյն նպատակին 2100 ռուբլի. ընդամէնը՝ 7100 ռուբլի:

Այս տեղեկութիւնները չափազանց արժէքաւոր են. ի հարկ է ո՛չ թէ նրա համար, որ Լազարեան երկու եղբայրները դրամական օգնութիւն են տուել Ներսիսեան դպրոցին, քանզի նման բարեգործութիւններ բազմաթիւ են եւ միշտ էլ յատուկ են եղել այդ զարմանալի տոհմի բոլոր անդամներին, — այլ նրա համար, որ այդ փաստը վկայում է, թէ Յովհաննէս Լազարեանը, նախ, որքա՜ն մտահոգուած է եղել ազգային կրթական գործին զարկ տալու գործով, եւ ապա թէ որպիսի՜ պայծառագիտութիւն է ունեցել նա ըմբռնելու ու նախատեսելու մի Հայոց դպրոցի անհրաժեշտութիւնը նաեւ Թիֆլիսում, այդ ժամանակուայ մի հայաշատ կենտրոնում, պայքարելու այն անսահման տգիտութեան ու խաւարի դէմ, որ այդ օրերին իշխել է Անդրկովկասում եւ, վերջապէս, որ այդ նախատեսութիւնը նա ունեցել է դեռ իր մահից առաջ (1801 թ.), երբ Ներսէս արքեպիսկոպոսը, թերեւս, դեռ չի ունեցել դպրոց հիմնելու մտադրութիւնը: Եթէ ընդունելու լինենք, որ այդ մտադրութիւնը Ներսէս եպիսկոպոսն էլ ունեցել է նոյն ժամանակաշրջանում, դա միայն մի նոր ապացոյց է, որ երկու մեծ հայրենասէրների, երկու մեծ լուսամիտ հայ գործիչների մշտական մտահոգութիւնները՝ լոյս ու կրթութիւն տարածել իրենց ժողովրդի մէջ, զուգադիպել են իրար:

Յովակիմ Լազարեանի բարի գործերից է եղել նաեւ Մոսկուայի Հայոց եկեղեցու բակում կառուցել 1782 թ. երկու տուն այդ եկեղեցոյ պաշտօնեաների համար եւ ապա իր ծախսով նորոգել տալ Եկեղեցոյ շէնքը 1821 թ.:

1818 թ. Յովակիմ Լազարեանը, տեսնելով, որ ինքը արդէն ծերացել է եւ ճեմարանի հոգաբարձուի պատասխանատու ու

[1] Տե՛ս Պրոֆ. Զինովեւ, էջ 18:
[2] Տե՛ս Ա. Երիցեան, «Կովկասահայք», Հ. Ա., էջ 49: Ցիշատակենք, որ Եփրեմը կաթողիկոս է եղել 1809—1830 թթ.:

© National Library of Armenia

բազմապիսի աշխատանքները այլեւս ի վիճակի չէ վարելու, նոյն թուի յունիս 15ին յանձնում է այդ պաշտօնը իր աւագ որդի Յովհաննէսին, իսկ կրտսեր որդուն՝ Խաչատուրին նշանակում նրան օգնական:

1826 թ. յունուար 26ին Յովակիմ Լազարեանը կնքում է իր մահկանացուն 83 տարեկան խոր ծերութեան հասակում, մեծ վիշտ պատճառելով իր հարազատներին, ճեմարանի աշակերտութեան, ուսուցչական կազմին եւ ողջ հայ հասարակութեան:

Գէորգ Քանանեանը հանդիսանում է լաւագոյն արտայայտիչը այդ զգացումների[3].

«Անփոխարինելի կորուստը առաքինի քաղաքացու խոր դառնութեամբ լցրեց իր բոլոր հայրենակիցների սրտերը: Շատերը ի դէմս նրան կորցրին իրենց անձնական հովանաւորին, մտերիմ բարեկամին եւ բարեգործին: Ամենքը միասին զրկուեցին իրենց լաւագոյն եղբայրակցից: Հասարակութիւնների կեանքի մէջ, որոնք ուժեղ են իրենց բարոյական շահախնդրութիւններով, երբեմն երեւան են գալիս երջանիկ ընտրեալներ: Նախախնամութիւնը նրանց վրայ շռայլում է իր լաւագոյն շնորհները: Նա առաջնորդում է նրանց բարւոյ ու պատուի պայծառ ուղիով, եւ կեանքը այդ ընտրեալների մնում է մի թանկագին կտակ քաղաքացիների եւ հետագայ սերունդների համար: Այդպիսին էր կոմս Յովհաննէս Լազարեանը, այդպիսին էր Յովակիմ Լազարեանը: Լիակատար իրաւունքով կարելի է ասել նրանցից իւրաքանչիւրի մասին Տակիտոսի խօսքերով՝ posteritati narratus et traditus superstes erit»:

Յովակիմ Լազարեանի աճիւնը ամփոփուած է Մոսկուայի Վագանկովսկի Հայոց հանգստարանում. Նրա շիրիմի վրայ փորագրուած է չափածոյ արձանագիր, բաղկացած 20 տողից, որից առաջ ենք բերում միայն հետեւեալ չորս տողը.

«Ղամբար լուսափայլ, Արփի Հայրենեաց,
Վըճիտ հայելի վարուց քոց նախնեաց,
Ընդէ՞ր յայդ անլոյս դագաղ ստուերամած
Խաւարեալ հանգչիս ի սուգ Հայկազնեաց»:

Յովակիմ աղայի յուղարկաւորութեան ժամանակ էլ ասուած են բանաստեղծութիւններ եւ յուզիչ դամբանականներ:

[3] Տե՛ս նրա ճառը, ճեմարանի 50ամեակի առթիւ արտասանած, էջ 24:

Ոմն Մարգար Խօրալեանը արտասանել է իր մի ընդարձակ բանաստեղծութիւնը, որի մէջ կարդում ենք այսպիսի տողեր.

«Զի՛ք մեր Հայր քաղցրագութ, չի՛ք անզուգ բարերար.
Մեր լապտեր բարութեան՝ որբ մանկանց ապիկար.
. . . .
Ցնդեցաւ ցրուեցաւ իշխանիս ցօղ բարեաց.
. . . .
Թօթափեա՛ զծիրանի, զգեցիր զքուրձ ողբոց,
Զի չիջաւ քոյդ արփի՝ ուղփաճեմ ճրագարան...»:

Իսկ Դաւիթ Օտապաշեանցը իր դամբանականի վերջում ասում է.

«Արդ, ո՛վ լծակցեալ եղբարք, ի ժամուս, յորում ի մուտս դարձաւ արեւն կենաց մերոց, բարձաւ ի գլխոցս թագն պարծանաց, պակասեցաւ ի մէնջ բոլոր բարեաց օթեւանն, աւաղ որդւոցս սիրեցեալ եւ կարօտեալ ի քաղցր հօրէն...» եւայլն[4]:

⁂

Յովակիմ Լազարեանցի ամուսինը՝ Աննա Սարգսեանը վախճանուել է 1820 թ. մարտ 11ին: Ունեցել են հինգ զաւակներ՝ Յովհաննէս, Խաչատուր, Յարութիւն, Ղազար Առաջին եւ Ղազար Երկրորդ, ու նաեւ վեց աղջիկ: Սրանք կազմում են Լազարեան տոհմի երկրորդ սերունդը:

Ղազար Ա. եւ աղջիկներից երկուսը վախճանուել են վաղահաս մահով:

II

ՄԻ ԷՋ

ՅՈՎԱԿԻՄ ԼԱԶԱՐԵԱՆՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

Մ. Մսերեանը, որպէս Յաւելուած, Յովակիմ Լազարեանի այնքան ժլատ կենսագրութեան, առաջ է բերում ամբողջութեամբ մի շատ թանկագին ու արժէքաւոր փաստաթուղթ, որի մէջ արտացոլուած է Յովակիմ Լազարեանի նախ հոգեկան առաքինութիւնները՝ նրա հայրենասիրութիւնը, նրա սէրը դէպի ուսումն ու կրթութիւնը, նրա ձգտում-

[4] Տես Մ. Մսերեանց, Գ. մաս, էջ 144—145:

ները գիտութիւն տարածելու բովանդակ հայ ժողովրդի մէջ, տեսնելով դրա մէջ միակ զօրաւոր զէնքը փրկելու ազգը այն խաւարից, որի մէջ նա ընկղմուած է, — եւ ապա այն մեծ մտահոգութիւնները՝ լաւագոյն կերպով կազմակերպելու իր կառուցած դպրոցի կրթական գործը, որի վրայ նա գուրգուրացել է իր ամբողջ կեանքի ընթացքին, ինչպէս մայրը իր հարազատ երեխայի վրայ: Այդ փաստաթուղթը վկայում է նաեւ, որ աղա Յովակիմը աղա չէր իր լոկ գրպանի հետեւանքով, այլ եւ աղա էր իր լուսաւոր գաղափարներով, իր մտաւոր պատրաստականութեամբ:

Այդ պատմական փաստաթուղթը կրում է հետեւեալ խորագիրը՝

«Տ. Յովակիմայ Լազարեանց Յայտարարութիւն առ իւր համազգիս»:

Այս Յայտարարութիւնը մի ընդարձակ գրութիւն է, որ կրում է 1820 թուականը: «Հանդէս Ամսօրեայ»ի սուղ էջերը թոյլ չեն տալիս առաջ բերելու այն ամբողջութեամբ, ուստի մենք մի քանի կարեւոր մէջբերումներով ենք բաւականանում:

Հեղինակը սկզբում խօսում է ու ջանում ապացուցանել այն մեծ օգուտները, որ ունին եւ բերում են ուսումն ու կրթութիւնը ընդհանրապէս ամէն մի ժողովրդի համար: Իր այս հիմնական միտքը լուսաբանելու համար բերում է պատմութիւնից օրինակներ եւ մատնանշում է հին յոյների, հռովմայեցիների, անգլիացիների, ֆրանսիացիների վրայ եւ ապա «ի յետնումս զՌուսս իսկ»:

Այնուհետեւ նա անդրադառնալով մեր ժողովրդի անցեալին եւ ներկային, ասում է. «Ահա՛ այս է եւ այսչափ շահեկանութիւն եւ պիտանութիւն դպրութեան. զորոյ յարգն մինչդեռ աշխարհահամբաւ հարք մեր ճանաչէին, եւ ի հայրենիս մեր մուծանել նկրտէին՝ մեք եւս զօրէն այնց լուսաշաւիղ ազգաց ազատաքայլ ճեմէաք, եւ վեհապանծ փառօք բերկրամիտ կենցաղավարէաք: Բայց բարէ՛ թշուառութեան մերում. երբ դպրութիւնն ի մէնջ անգոսնեցաւ, եւ ուսումնականութիւնն տեղի տուեալ դադարեցաւ, սկսաք այնուհետեւ զօրինօք բարուք կենցաղավարութեան ապախտ առնել, եւ զազատականութիւն մեր յանարգանս մատնել, յանձանց մերկացեալ մինչ իսպառ զամենայն զպարծանս տիեզերասաստ մերոց նահապետաց, որով առ սակաւ սակաւ ընտելացաք զստրկութիւնն յօժարակամ յանձն առնուլ, եւ նախամեծար համարել զայն քան զշքեղաշուք վեհանձնութիւն նախնի Հայկազանց»:

Յիշատակելով այն պատմական իրողութիւնը, որ 17րդ դարում մեզ մօտ հանդէս եկան գիտնական հոգեւորականներ, որոնք խաղաղ ապաստան գտան Եւրոպացիների մօտ, նրանք ձեռնամուխ եղան «լուսաւորել զմիտս մեր թարգմանութեամբ եւ տպագրութեամբ օգտակար իմաստալից ինչ ինչ գրեանց», բայց իրենց նպատակին չհասան «վասն անփարթամ՝ անպաշտպան եւ սակաւաթիւ գոլոյ նոցա՝ յետ սակաւուց լքեալ տկարացան, եւ ակամայ կամօք հրաժեշտ տուեալ յաստուածահրաւէր խորհրդոց իւրեանց՝ տեսին դառնութեամբ սրտի զայնքան աշխատանս իւրեանց յանարգանս մատնեալ եւ յումպէտս կարգեալ: Սոքա էին անմահական յիշատակաց արժանի գերաշուք Ոսկան վարդապետն, Թովմաս եպիսկոպոսն, Ղուկաս Դպիրն Վանանդեցի, եւ այլք ոմանք»:

Այնուհետեւ հեղինակը դարձնում է իր հայեացքը դէպի Մխիթարեանները: Սկզբում նա գովաբանում է նոցա աշխատասիրութիւնը, որի շնորհիւ «հետազօտութեամբ իւրեանց երեւելի ընծայեցուցին զանձինս ի նորոգումն բազմահարուստ Հայկական բարբառոյ մերոյ, որպէս եւ ի ձեռն ազգի ազգի յոգնիմաստ մատենից շարադրութեամբ եւ թարգմանութեամբ՝ քաջագիտութեամբ իմն յառաջադէմ մատուցան ըստ կարի յարդարել զմիտս մեր յըմբռնումն կարեւոր մակացութեանց (գիտութիւնների)», — բայց դառնութեամբ նկատում է.

«Բայց սակայն բաժանեալք ի մէնջ, եւ յարեալք յեկեղեցին Հռովմայ՝ զուն գործեցին (ջանք դրին) ի սկզբանէ անտի եւ այսր՝ աշալուրջ ճարտարութեամբ առ սակաւ սակաւ եւ զմեզ օտարացուցանել յուղղադաւան սրբոյ Եկեղեցւոյ մերմէ եւ ի շաւղաց մերոց լուսարուխ աստուածահաճոյ Հայրապետաց»:

Կրօնական խորութեան զգացմունքը ընդգրկում է բարեպաշտ հայ լուսաւորչական Յովակիմ Լազարեանցի հոգին եւ նա հրաժարւում է տեսնել Մխիթարեանների կրթական-ուսումնասիրական աշխատանքների մէջ որեւէ օգուտ հայ ազգի համար...:

Այսպէս, ուրեմն, հայ ազգի ներկան շատ

© National Library of Armenia

անմխիթար է երեւում հեղինակին, ուստի լցուած դառն վշտով, բացականչում է՝

«Տեսէ՛ք, ուրեմն՝ թէ քանի ողբալի է վիճակ Հայրենեաց մերոց...»: Այս ընդհանուր տեսութիւնից յետոյ, հեղինակը անցնում է Ճեմարանի հիմնարկութեան խնդրին եւ յայտնում է, որ իր եղբայրը «Աղա Յովհաննէսն Եղիազարեանը» իր ազգի եւ Հայրենիքի այդ խիստ տխուր պայմաններից մղուած, դեռ շատ տարիներ առաջ, քան իր մահը, միտք էր յղացել հիմնելու մի դպրոց՝ «համբուրելի հիմնարկութիւն», բայց նա իր բազում «յողնախուռն» զբաղմունքների հետեւանքով, ի վիճակի չէր եղել, ուստի մահուանից առաջ կտակել էր իրեն՝ «Նուաստութեան իմում կատարել զբաղձանս սրտի իւրոյ լաւագոյն իմն եղանակաւ»:

«Յաղագս այսորիկ յամի 1814 եկեալ իմ ի Ս. Պետերբուրգայ աստ ի Մոսկով՝ օգնականութեամբ Աստուածոյ, եւ բարեհաճութեամբ օրհնեալ ազգախնամ Տէրութեանս՝ ձեռն արկի շինել զկայնանիստ հոյակապ Համալսարան[1]. եւ յետ ծախելոյ աւելի քան զ200 հազար ռուբլի ի սեփական գոյից իմոց՝ բաց յայնմ գումարէ, զոր ընկալայ յարքունական գանձանակէ (այն է փոխանակ բարգեալս ի բազում ամաց հետէ ի մայր գումարէ անդր մուծելոյ յինէն, ըստ զօրութեան կտակի գերապանց եղբօր իմոյ Աղայ Յովհաննէսի), հազիւ թէ հասուցի զայն յիւր աւարտ ի 1816 եւ ի սկզբան յետագայ ամի ժողովեցի զՀայկածին մանկունս յամենայն շրջակայ նահանգաց, եւ սկիզբն կալայ ի ձեռն քաջակիրթ դաստիարակաց վարժել զնոսա ի փառս մարգարէին Աստուածոյ»:

Այնուհետեւ յայտնում է, որ եղբօր կտակած 200 հազար ռուբլին թողել է արքունի գանձանակում, որ տարեկան բերում է 10 հազար ռուբլի տոկոս, եւ աւելացնում է՝

«Բայց յայսմանէ ես յարդեանց իմոց յաւելեալ եմ զայն մայր գումար. մինչեւ կարողանալ պահպանել ըստ ամենայն հանգամանաց բարեկաւութեան զ30 Հայ մանկունս որբոց եւ աղքատաց»:

Ի վերջոյ աղա Յովակիմը յայտնում է, որ եթէ դրամական նուիրատուութիւններ լինեն Ճեմարանին, այն ժամանակ կարելի կը լինի 30ից աւելի աշակերտներ ընդունել, իսկ եթէ գտնուեն Հայորդիք, որոնք կը բարեհաճեն նուիրաբերել Ճեմարանին՝

«...Զտպագիր կամ զձեռագիր մատեանս, եւ կամ զտետրակս. որպիսի են Պատմագրութիւնք, Ճառընտիրք, Մեկնութիւնք, եւ այլն, հաւաստի կարէ լինել՝ զի մեք պահպանեսցուք խնամով ի բազմահարուստ դրատան մերում (յորոյ վերայ արդէն ծախեալ եմ աւելի քան զ20 հազար ռուբլի). արձանացուցանելով զանուն նորա ի ճակատ ընծայեալ մատենին. եւ հանդերձ Խորհրդարանաւ իմով շնորհակալ եղէց զնմանէ յատուկ նամակաւ: Նոյնպէս որ կտակաւ ախորժեսցէ աւանդել գնուէրս ինչ յընդարձակութիւն եւ յառաւելութիւն աշակերտաց Համալսարանի[1], ընկալցի շնորհակալութիւն ի մէնջ, եւ յանուն նորա յիշատակեսցի յազգաց յազգս»:

Հետագայում, մեր ներկայ աշխատասիրութեան երկրորդ մասում՝ Ճեմարանի բուն պատմութեան մէջ, կը տեսնենք, որ աղա Յովակիմի այս դիմումը հայ հասարակութեան անարձագանք չմնաց. եղան դրամով նուիրատուներ, որոնք իրենց անունով մէկ-երկու որդեգիրներ էին պահում Ճեմարանում, եղան նաեւ ձեռագիրներ եւ թանկարժէք գրքեր նուիրողներ:

Այս յայտարարութեան մէջ ասուած է նաեւ, որ ի նկատի առնելով իր ծերութիւնն եւ բազում զբաղմունքները, լիովին յանձնարարում է Ճեմարանի կառավարութիւնը իր երկու աւագ որդիներին՝ Յովհաննէսին եւ Խաչատուրին:

«Սոքա — ասում է հեղինակը — զարգացեալ իսկ յերեւելի Ճեմարանս Ռուսիոյ՝ քաջայարմարք են յուղղել զընթացս սորա ի բարին եւ ի կատարեալն: Եւ ունին յօգնականութիւն ինքեանց զԽորհրդարան բաղկացեալ յերեւելի յաստիճանաւոր եւ ի գիտնական ոմանց ազնուականաց երկրիս, եւ ի թագաւորական Պրոֆէսորաց Ճեմարանիս Մոսկովու. ընդ որս է եւ գերապատիւ Սերովբէ գիտնական վարդապետ մեր, առաքեալ յատկապէս ի Սրբազնակատար եւ ի Ծայրագոյն Քահանայապետէ Սրբոյ Էջմիածնի՝ յԵփրեմայ, լինել գործակից որդւոց իմոց, եւ Տեսուչ Համալսարանիս»:

Աղա Յովակիմ խօսում է նաեւ Ճեմարանում աւանդուող առարկաների մասին, ուսման վարձի մասին մի խօսքով տեղեկութիւններ է տալիս Ճեմարանի մասին, քանի որ այս ամէնի մասին խօսք լինելու է հետագայում, ուստի զանց ենք առնում «Յայտարարութեան» այդ մասը:

[1] «Համալսարանը անուն՝ ի Թղթի աստ եւեթ տեսանի ընծայեալ Ճեմարանին Լազարեանց, եւ այն՝ յայտ է թէ՝ ըստ կամս կարծեաց կամ ըստ առանձին ինչ հաճոյից շարագրողի բանիցդ»: Մ. Մսերեան:

⁂

Յովակիմ Լազարեանը յղացել էր նաեւ մի ուրիշ շատ գեղեցիկ միտք, որ կարող էր մեծ օգուտներ բերել հայ պատմութեան եւ հնութիւնների ուսումնասիրութեան գործին, եւ որին նա ձեռնամուխ է լինում անմիջապէս գործադրելու, բայց որը, դժբախտաբար, երկար կեանք չի ունենում. նա մեռնում է իր նախաձեռնողի մահուան հետ միասին...:

1823 թ. օգոստոս 4ին, — պատմում է Գէորգ Քանանեանը իր ճառի մէջ, ասուած Ճեմարանի 50ամեակին, — Ճեմարանին կից կազմուեց «Հայկական հնութիւնների սիրողների ընկերութիւն», նախաձեռնութեամբ Յովակիմ Լազարեանի եւ նրա անմիջական մասնակցութեամբ: Թէեւ այդ Ընկերութեան ծրագիրն ու գործունէութիւնը, նրա կարճատեւ գոյութեան ընթացքին չէին կարող ստանալ իրենց պատշաճ զարգացումը, բայց նպատակը որին պէտք էր ձգտել, գրուած էր միանգամայն պարզ եւ խոստանում էր բեղմնաւոր արդիւնքներ տալու: «Հայաստանի հետազօտութիւնները, — ասուած էր Ընկերութեան որոշումների մէջ, — բաց կանեն հնութիւնների հետաքրքրական հետքեր»: Ընկերութիւնը մտադիր էր գործի հրաւիրել ո՛չ միայն հայ, այլ եւ օտար գիտնական ույժերին՝ զբաղուելու հայկական եւ արեւելեան հարուստ հնութիւնների հետազօտութիւններով: Ընկերութիւնը դիմելով նրանց ասում էր՝ «Թախանձագին կերպով հրաւիրում են մասնակցելու Ընկերութեան գործունէութեան, ուղարկելով գրքեր, ձեռագիրներ, հրովարտակներ եւ յօդուածներ զանազան լեզուներով, որոնք վերաբերում են հին Հայկական թագաւորութեան պատմութեան եւ արժէքներին»:

Քանանեանը յիշատակում է նաեւ մի քանի յօդուածներ Ընկերութեան կանոնադրից, որոնք լոյս են սփռում ընկերութեան անելիքների վրայ եւ միաժամանակ ի յայտ են բերում Յովակիմ Լազարեանի ազգային մտքի լուսաւորութեան մշտական մտահոգութիւնները:

Յօդ. 1. Ընկերութեան աշխատակիցները պիտի զբաղուեն թարգմանութիւններով զանազան յօդուածների, համաձայն Ընկերութեան Նախագահի ցուցմունքների:

Յօդ. 2. Այն յօդուածները, որոնք կը ստանան Նախագահի եւ Ընկերութեան հաւանութիւնը, կը թարգմանուեն զանազան լեզուներից միայն ռուսերէնի ու կը զետեղուեն Մոսկուայի եւ Պետերբուրգի ամսագիրներում: Ժամանակով, ըստ Ընկերութեան հայեցողութեան, բոլոր տպագրուած յօդուածները կը հրատարակուեն միասին «Հայաստանի Ֆենիկս» անուան տակ:

Յօդ. 3. Ընկերութիւնը պիտի ունենայ իր զբաղմունքների արձանագրութիւնները, որպէս զի տարեվերջին երեւան գայ, թէ ինչ օգտաւէտ ու կարեւոր գործեր են կատարուած ի փառս եւ ի պատիւ Հայաստանի:

«Տարակոյս չկայ, — նկատում է Գ. Քանանեանը, շարունակելով իր խօսքը, որ այդ ընկերութիւնը, ձեռք բերելով աստիճանաբար նոր եւ գործունեայ աշխատակիցներ, կարող էր հիմք դնել Հին Հայաստանի դպրութեան լուրջ գիտական ուսումնասիրութեան, կարող էր պսակուել շատ կարեւոր արդիւնքներով ընդհանրապէս Արեւելքի հետ ծանօթութեան գործում, ինչպէս եւ նրա գրականութեան ու դպրութեան հետ: Բաց ի այդ, ընկերութիւնը չափազանց բարերար ազդեցութիւն կ'ունենար Ճեմարանի սաների վրայ եւ կը մղէր նրանցից լաւագոյններին ու տաղանդաւորներին դէպի մի շահաւէտ եւ բարձր նպատակի, կը զարգացնէր նրանց մէջ սէր դէպի լուրջ ու հիմնաւոր ուսումնասիրութիւն հին լեզուների, ինչպէս նաեւ եւրոպական եւ արեւելեան լեզուների»: (Տես Գ. Քանանեանի ճառը, էջ 20—21:)

Ճառախօսը այսպէս ծանօթացնելով Ընկերութեան ծրագրի հետ ու պարզելով նրա գիտական մեծ արժէքը, ցաւ է յայտնում, որ ընկերութիւնը շատ կարճատեւ կեանք ունեցաւ. ցանկանում է, որ հիմնադրի գեղեցիկ միտքը իր յաջորդներն ու շարունակողներն ունենայ, որպէս զի Ճեմարանի երկրորդ յիսնամեակը պսակուի նման մի հիմնարկութեան բեղմնաւոր արդիւնքներով:

Անշուշտ, շատ ցաւալի է, որ այդ բաղձանքներն եւ յոյսերը չարդարացան ու արձագանք չգտան ժամանակակից հայ մտաւորականների ու գիտնականների մէջ...:

(Շարունակելի:)

© National Library of Armenia